«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ինչու՞ էր Հիսուս Քրիստոսը մարդկանց հետ խոսում առակներով

Առարկան՝ Հասարակագիտություն

Հետազոտող ուսուցիչ՝ Գալստյան Ռուզաննա Սամսոնի

Ուսումնական հաստատություն՝ Ն. Վ. Գոգոլի անվան թիվ 35 հիմնական դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. *Ներածություն*……....1
2. *Ի՞նչ է առակը*.....2
3. *Ի՞նչ է առակագրությունը և ովքե՞ր են առակագիրները*.....4
4. *Ինչու՞ էր Հիսուս Քրիստոսը մարդկանց հետ խոսում առակներով*……7
5. *Ժայռի վրա կառուցել տունը*.....8
6. *Հավատի լույսը*.....9
7. *Երկու որդիների առակը*.....9
8. *Լավ ընկերներ*.....10
9. *Սերմնացանի առակը*.....11
10. *Որոմների առակը*.....12
11. *Բարի սամարացու մասին առակը*.....14
12. *Արդար հատուցում. մարդը որ ներել չէր ուզում (ըստ Մատթեոսի Ավետարանի)*18
13. *Այրի կնոջ ու դատավորի առակը*.....20
14. *Անիրավ տնտեսի առակը*.....20
15. *Վերջաբան*.....21
16. *Գրականության ցանկ*.....22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տվյալ հետազոտական աշխատանքի թեման վերաբերում է Աստվածաշնչյան առակներին ու դրանց դաստիարակչական նշանակությանը: Այն իր բովանդակային առումով շատ կարևոր է, խորիմաստ, բոլորի համար է՝ չունենալով ո՛չ տարիքային, ո՛չ որևէ այլ առանձնահատկություն, արդիական է իր բազմիմաստ ու բազմակողմանի արժեքներով:

Այն ավելի լավ ընկալելու համար պետք է ուսումնասիրենք ամենայն խորությամբ և ներկայացնենք հաջորդաբար.

ա) Ներածություն. որում պետք է հիմնավորենք մեր թեմայի կարևորությունը, հստակ ձևակերպենք աշխատանքի նպատակը, խնդիրները, կառուցվածքը, կատարենք հարցադրումները, որպեսզի ոչ միայն ակնառու դարձնենք մեր հիմնախնդիրը, այլև հասնենք դրա լուծմանը:

բ) Հարցադրում. ի՞նչ է առակը, առակագրությունը, ո՞վքեր են առակագիրները, ո՞րն է Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը, ինչու՞ է Հիսուս Քրիստոսը մարդկանց հետ խոսում առակներով: Այստեղ մի քանի առակներ մեկնաբանելով՝ ցույց կտանք նրանց դաստիարակչական նշանակությունը:

գ) Քայլարշավ. այն կատարելիս պետք է պահպանել հաջորդականությունը.

- ժամանակագրություն
- Տարբեր աղբյուրների օգտագործում
- Տերմինների և բառերի մեկնաբանություն
- Կապ այլ առարկաների հետ. մենք գիտենք, որ առանց միջառարկայական անքակտելի կապի հնարավոր չէ նյութի բացատրումը, սերմանումը, ամրապնդումը (այստեղ կապ կա մայրենիի, հայոց եկեղեցու պատմության, գրականության, հայոց լեզվի, համաշխարհային պատմության, հասարակագիտության և այլ առարկաների հետ):

դ) Եզրահանգում . սա այն է, որ միշտ մեզ հարց ենք տալիս՝ ի՞նչ, ինչի՞ կամ ու՞մ:

Կամ այլ հարցերով սկսում ենք, հետո հասնում գագաթնակետին և ավարտում վերջնահանգույցով. մի գեղեցիկ շղթա է կառուցվում, որը պետք է <<փայլի>>երեխայի պարանոցին, նրանում ոչ մի օղակ չպետք է թույլ լինի, որպեսզի հետագայում դառնա մնայուն գիտելիք, հմտություն, կարողություն, գեղեցիկ ու մաքուր արժեք (արժեհամակարգ = որակ):

ե) Պատկերներ, գծապատկերներ և այլ ինքնատիպ մոտեցումներ (կազմված իմ կողմից):

զ) Օգտագործված գրականության ցանկ

Է) Վերջաբան. այն ավարտել վերլուծությամբ

- Աստվածաշունչ մատյան
- Առականի
- Թեմա, որն արդիական է և միշտ մնայուն, քանի կա հավատքն ու մարդասիրությունը:

Ի՞ՆՉ Է ԱՌԱԿԸ

Առակը ի սկզբանե եղել է բանավոր ստեղծագործություն (<<բերան-բերան, հազար բերան...>>): Այդ բառը հին հայերենում մի քանի նշանակություն է ունեցել՝ այլաբանություն, իմաստնություն, խրատ, բարոյախոսություն սերմանող, կարևոր նշանակության որևէ զրույց: Այն իր մեջ հավաքագրել և ամբողջացրել է և՛ դրական, և՛ բացասական հատկանիշներ: Առակը նաև կենդանական հեքիաթի տարատեսակ է, որից էլ հենց ծնվել է: Այն իր ծավալով լինում է փոքր, բայց խրատական մեծ և խորը բովանդակությամբ, ինչն ամենակարևորն է: Վերջում միշտ տրվում են հետևյալ ձևակերպումները հարցի տեսքով (սեղմ, դիպուկ եզրակացություն, այնուհետև դառնում թևավոր խոսք և ինքնուրույն գոյատևում ցայսօր).

1. <<Առակս ի՞նչ կցուցանե …>>
2. <<Առակս ցուցանե …>>

3. <<Այս առակը ցույց է տալիս…>>

Առակները՝ զանազան հետաքրքրաշարժ զրույցները պատմում են այլաբանորեն, այսինքն դա խոսքի անուղղակի ձևն է, երբ մարդիկ ու իրենց դրական կամ բացասական գծերը համեմատվում են կենդանիների, բույսերի, ծառերի և այլնի հետ: Պետք չէ զարմանալ, երբ արմատները, սոսին և տերևները, փրփուրն ու մարգարիտը, հովազը, աղվեսն ու առյուծը, խխունջն ու սունկը, ինչպես նաև ուղտը խոսում են մարդկային լեզվով: Մենք գիտենք շատ այլ օրինակներ (օր.՝ Վարդան Այգեկցի 12-13րդ դարեր՝ <<Առյուծ և մարդ>>, Հովհաննես Շիրազ 1914-1984թթ.՝ <<Մարգարիտն ու փրփուրը>>, Աթաբեկ Խնկոյան 1870-1935թթ.՝ <<Խխունջն ու սունկը>>, Մխիթար Գոշ 12րդ դար՝ <<Ուղտը և իր խնամողը>>, Եզոպոս Ք.ա. 6րդ դար՝ <<Աղվեսն ու հովազը>>, <<Գայլերն ու ոչխարները>>, <<Ուղևորներն ու սոսին>>, Ավետիք Իսահակյան 1875-1957թթ.՝ <<Կյանքից թանկ բանը>>, Իվան Կռիլով 1769-1844թթ.՝ <<Տերևներն ու արմատները>>, Աստվածաշունչ՝ <<Մարդը որ ներել էր ուզում>> (ըստ Մատթևոսի Ավետարանի), Վարդան Այգեկցի 12-13րդ դարեր՝ <<Աղվեսագիրք>>, <<Իմաստուն զինվոր>>, <<Եզոպոս>> (Ք.ա. 6րդ դար), Խնկո Ապեր՝ <<Մկների ժողովը>>, <<Գյուղացին և իր որդիները>> և այլն): Առակներում գովաբանվում ու խրախուսվում է բարին, գեղեցիկը, մարդկայինը: Եվ հակառակը՝ ծաղրվում, դատապարտվում և մերկացվում է հոռին, չարն ու վատը, տգեղն ու անմարդկայինը, ծաղրվում զանազան արատներ՝ ժլատությունը, պարծենկոտությունը, չարությունը, ագահությունը, ստախոսությունը, ծուլությունը և այլն: Առակը հիմնականում բաղկացած է լինում երկու մասից.



Հնարավոր է առակ հորինել, եթե մշակես հետևյալ ուղեցույցը՝

- վերնագիր,
- հերոսներ,
- դեպքերի հակիրճ նկարագրություն,
- հերոսների երկխոսություն,
- ավարտ,
- խրատական մաս:

Առակի ամենակարևոր նշանակությունը նրա խրատադաստիարակչական իմաստն է:

Ի՞ՆՉ Է ԱՌԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԱՌԱԿԱԳԻՐՆԵՐԸ

Առակները շատ հին ժամանակներից ի վեր սիրված են եղել, այդ իսկ պատճառով թարգմանվել և տարածվել են աշխարհով մեկ, եղել են շատ ու շատ ժողովուրդների բանահյուսության ու գրականության մեջ: Ահա այստեղից էլ նրա անվանումը (առակ+գիր+ություն)առակագրություն, իսկ դրանցով զբաղվողները՝ առակագիրներ (առակ+գիր+ներ): Առակագիրների ամենահին ներկայացուցիչը հունական մեծ առակագիր Եզոպոսն է, ով ծնվել է մ.թ.ա. 600 տարի առաջ՝ Փոքր Ասիայի Փռյուգիա նահանգում: Նրա կյանքի պսակն են կազմում նրա առակները, որոնք լի են իմաստնությամբ և փիլիսոփայախրատական նշանակությամբ: Նրա առակներով հիացել և հանգավորման է ենթարկել հին հունական աշխարհի մեծագույն փիլիսոփա Սոկրատը:
Լաֆոնտենի և Կռիլովի առակների մի մասը Եզոպոսի առակների գեղարվեստական մշակումն են: Հայկական միջնադարյան առակագիրներ Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու մի շարք ստեղծագործություններ նույնպես հիշեցնում են Եզոպոսի առակները (Մ. Պլանուտ՝ <<Եզոպոսի կյանքը>>):

Հռոմեական գրականության մեջ հայտնի է Փեդրոսը, ֆրանսիականում՝ Ժան դը Լաֆոնդենը, Ռուսականում՝ Ի.Ա. Կռիլովը, ռուս-սովետականում ՝ Ս. Վ. Միխալկովը:

Առակներով հարուստ են եղել նաև արևելյան երկրները՝ հատկապես Հնդկաստանը:

Հայաստանում առակագրությունը սկզբնավորվել է վաղ միջնադարում՝ սկզբում հունական առակներից թարգմանված, որոնց գլխավոր կոթողներն են՝ <<Բարվախոս>> (<<Բարոյախոս>>) և <<Ոլիմպիանի (<<Ողոմպիանի>>) առակներ>> կոչված ժողովածուները, որոնք հունարենից թարգմանվել են 5-6րդ դարերում, ըստ ոմանց վկայության՝ 7րդ դարում:

Հայկական ինքնուրույն առակագրությունը երևան է եկել 12-13րդ դարերում: Նրա գլխավոր ու նշանավոր ներկայացուցիչներն են՝ Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին: Վ. Այգեկցու անունով պահպանվել են առակների ժողովածուներ, որոնցից ամենահայտնին <<Աղվեսագիրքն>> է (օր.՝ <<Իմաստուն զինվոր>>): Ձեռագրերում շատ հաճախ առակներ են կոչվում նաև Ներսես Շնորհալու <<Հանելուկները>>: Մենք ունենք նաև հայկական <<անանուն>> առակների ժողովածուներ, այդպիսին է օրինակ՝ Վ. Այգեկցու անունով <<Վարդանյան ժողովածուներ>>-ը (պայմանական անունով հանրածանոթ վերոնշյալ <<Աղվեսագիրքը>>), որը համակողմանի հետազոտել ու գիտական հրատարակության է ենթարկել Նիկողայոս Մառը: Նշենք, որ հայկական առակների շարքում տեղ ունեն նաև առակատիպ զրույցները և բարոյախոսական նյութերը: Առակների ձեռագիր ժողովածուները հաճախ այսպիսի ձև ունեն, օրինակ՝

1. <<Պատմութիւնք Օգտակարք>>,
2. <<Խօսք իմաստանոց >>,
3. <<Խրատք գեղեցկայարմարք>>,
4. <<Խրատք առակաւոր բանից>> և այլն:

Հայ գրականության մեջ առակներ են գրել նաև Խաչատուր Աբովյանը, Ղազարոս Աղայանը, Ավետիք Իսահակյանը, վերջին շրջանի հայ առակագիրներից հայտնի են նաև Խնկո Ապերը, Ա. Դարբինին, Մկրտիչ Կորյունը և շատ ուրիշներ:

Առակը նաև գրական տեսակ է, որովհետև մարդը սիրում է սովորել օրինակով, քան վերացական խրատով, քանի որ դա հեշտացնում է իրենց կյանքը: Ուժեղ կամքի տեր մարդկանց մոտ այն դրսևորվում է դրական ձևով, իսկ թույլերի մոտ՝բացասական:

Առակները հնագույն ժամանակներից մինչ օրս սիրված են թե՛ մեծերի և թե՛

փոքրերի կողմից ու շարունակվում են մնալ գրական տեսակ: Առակագիրները առակները օգտագործել են նաև որպես ժանր գրավոր գրականության մեջ, որը մեկնարկվում է միջնադարի 476-1640թթ.-ին(5րդ դարի 2րդ կեսից մինչև 17րդ դարի 1ին կես՝ Արևմտյան Հռոմեական Կայսրության կործանումից մինչև Անգլիական բուրժուական հեղափոխությունը): Գիտական-պետական գործիչ Գրիգոր Մագիստրոսի <<թղթերում>> օգտագործված ամենատարբեր առակները, որտեղ խոսվում է, որ ճարտասանության, քերականության, առասպելավարժության համար պահանջում էին ոչ միայն գրել, անգիր անել և մեկնաբանել առակները, այլև ներկայացնել վարժության տեսքով, որը օգնում էր նրանց պատրաստվել որպես ապագա մեկնաբաններ: Բայց եկեղեցին և եկեղեցականները, համարելով առակները գեղջկական, առհամարում ու հալածում էին դրանցով զբաղվողներին: Առակներում տարբեր էին երգիծանքի ձևերն ու միջոցները: Առակը, առակագրությունը և առակագիրները քաղված են ժողովրդի բերանից, մնայուն մեկնաբանություններ են՝ խրատ-բանաձևերով, որոնք ժամանակի ընթացքում ճոխացվել են, համարվել են նաև հայ գրականության արձակի մարգարիտներ: Դրանք կարևոր գրավոր աղբյուրներ են ժամանակի և կյանքի բազում կողմերը լուսաբանելու համար, որը կարմիր թելի նման ձգվում է մինչ այսօր և համարվում նաև մեր հոգևոր մշակույթի մի մասը: Այդ ամենը միաձույլ է իրեղեն աղբյուրների ու նյութական մշակույթի հետ: Սա ներկայացնենք գծապատկերով.



Նշենք <<առակ>> բառի բացատրությունը.

Առակ բառացի նշանակում է առ+ակն=աչքի առաջ (նշենք, որ հեղինակը ցույց է տալիս իր հստակ վերաբերմունքը)՝ արձակ, չափածո, այլաբանական, բարոյախոսական, երգիծական, ծաղրական բովանդակություն, դժվարիմաց այլաբանություն, մեկնության կարոտ հանելուկ, իմաստալից խոսք, առած, խայտառակություն, նախատինք, հայհոյանք, անեկդոտ, մասալ, խայտառակություն:

Басня - притча, стать, сделаться, притчей во языцей, острамить, ославить.

Fable - parable, cock.

ԻՆՉՈՒ՞ ԷՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ ԽՈՍՈՒՄ ԱՌԱԿՆԵՐՈՎ

Հիսուսը քարոզելիս մարդկանց հետ խոսում էր առակներով, որպեսզի իր միտքն ավելի հասկանալի դարձնի նրանց: Նրա կողմից պատմված առակները բոլորովին էլ ո՛չ առասպելական էին, ո՛չ էլ հեքիաթային, ինչպիսին որ մենք գիտենք: Այստեղ չկային խոսող թռչուններ, երգող կենդանիներ, թռչող գազաններ և այլն, այլ դրանք վերցված էին մարդկանց կենցաղից ու իրական կյանքից: Կա նաև այլ պատասխան, որ Հիսուսը մարդկանց հետ խոսում էր առակներով, քանի որ դրանց միջոցով արտահայտված ողջ խոսքը ավելի տպավորիչ էր լինում ու այն մարդկանց հիշողության մեջ շատ հաճախ պահպանվում էր ավելի երկար քան ուղիղ ասված խոսքը, որը ավելի շուտ էր մոռացվում: Նշենք ևս մեկ հատկանիշ, առակը համարվում էր Աստծո խոսք, որը հասանելի էր բոլորի համար, իսկ չհասկանալու դեպքում, մարդիկ դիմում էին Հիսուսին և ստանում իրենց հարցերի լիարժեք պատասխանները:

Նշենք ևս մեկ փաստ. Հիսուսը խոսում է առակներով, որպեսզի մարդիկ գիտենան Աստծո արքայության գաղտնիքները. << ...Բայց ոչ նրանք, որովհետև, ով ունի նրան, պիտի տրվի ավելիով, իսկ ով չունի, նրանից պիտի վերցվի ունեցած փոքր բաժինն էլ, որովհետև մարդիկ նայում են, բայց չեն տեսնում, ականջ են դնում, բայց չեն լսում ու հասկանում>>: Ահա այսպես է իրականում նրանց նկատմամբ Եսայու մարգարեությունը. <<…Անդադար կլսեն, բայց չեն հասկանա, շարունակ կնայեն, բայց չեն տեսնի, որովհետև

այս ժողովրդի միտքը թանձրացել է. նրանք խցել են իրենց ականջները և փակել են իրենց աչքերը, որպեսզի չլինի թե իրենց աչքերը տեսնեն և ականջները լսեն, մտքերը հասկանան ու դարձի գան, և ես բժշկեմ նրանց >>: Այնուհետև մեկնաբանում, որ երանի՜ ձեր աչքերին, որովհետև տեսնում են, և երանի՜ ձեր ականջներին, որովհետև լսում են: <<...Ասում եմ ձեզ, որ շատ մարգարեներ արդարներ փափագեցին տեսնել ձեր տեսածները, բայց չտեսան, և ցանկացան լսել ձեր լսածները, բայց չլսեցին>>: Հիսուսը առակներով է սովորեցնում, որ հեշտ լինի հիշել, օրինակները տպավորիչ լինեն և չմոռացվեն: Առակները օգնում են զատորոշել նրանց, ում <<սիրտը կարծրացել էր>> ճշմարտության հանդեպ. անհրաժեշտ էր մարդկանց մեջ բացահայտել իրենց ներքին մղումները՝ ինչը մարդուն մղում էր միշտ հարցեր տալ առակի բուն նշանակությունը հասկանալու համար: Խոնարհ մարդիկ այդպես էին անում, իսկ հպարտ ու անտարբեր մարդիկ՝ ո՛չ: Առակների միջոցով ճշմարտությունը հայտնի էր դառնում նրանց, ու՛մ սիրտը ծարավ էր ճշմարտության, և թաքնված էր մնում նրանցից, ու՛մ սիրտը հպարտ էր: Հիսուսի առակները բազմակողմանի օգտակարություն ունեին, դրանք մարդկանց մեջ մեծ հետաքրքրասիրություն էին առաջացնում՝ մղելով նրանց լսել: Այն պատկերավորվում էր իրենց մտքում, որը հեշտացնում էր հասկանալ այդ առակների խորիմաստ նշանակությունը:

Մեկնաբանենք Աստվածաշնչյան ևս մեկ առակ.

ԺԱՅՌԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑԵԼ ՏՈՒՆԸ

Հիսուսը իր մոտ է կանչում իր խոսքով. <<...ով իրեն լսում է ու իր մոտ է գալիս և ով չի լսում ու հեռանում է իրենից>>: Նա նման է այն մարդուն, որ տուն կառուցելու համար հողը խորն է փորում ու հիմքը հաստատում ժայռի վրա: Այդ ժամանակ գետը հեղեղներից հորդանա, զարկի այդ տանը, չի կարողանա խախտել այն, որովհետև տան հիմքը ժայռի վրա է հաստատված: Երբ մարդը տունը կառուցի հողի վրա՝ առանց հիմքի, գետը կզարկի և հեշտությամբ իսկույն կքանդի այն. ի՞նչ ահավոր է լինում այդ տան կործանումը: Այստեղ Հիսուս Քրիստոսը իրեն համեմատում է ժայռի հետ, իսկ ավազը՝

այս աշխարհի: Եթե քո կյանքը կառուցում ես այս աշխարհի վրա, ապա կգա մի օր և այն կփլուզվի: Իմաստուն մարդիկ իրենց կյանքը պետք է կառուցեն Հիսուս Քրիստոսի խոսքի վրա և հոգով անկեղծ համաձայնվեն նրա հետ: Այդ ժամանակ ոչ մի չարիք, նեղություն և դժվարություն չի կարող մեզ կործանել:

Առակը ի՞նչ է սովորեցնում. պետք է խոսքը ոչ միայն լսող լինենք, այլև կատարող:

ՀԱՎԱՏԻ ԼՈՒՅՍԸ

Երբ մարդը վառում է ճրագը, չպետք է թաքցնի ու դնի կաթսայի տակ, այլ պետք է դնի աշտարակի վրա, որ իր տուն մտնողները միշտ լույսը տեսնեն: Մարդու մարմնի ճրագը աչքն է , երբ այն առողջ է, մարմինը լուսավոր է, երբ հիվանդ՝ խավար: Միշտ պետք է ուշադիր լինել, որ մարդու մեջ լույսը չխավարի, անգամ մի մասնիկ՝ ճրագի շողերը միշտ լուսավորեն մարդուն:Շատ անգամ մարդիկ տարված են իրենց արտաքինը մաքրելով, բայց ներսը լի է հափշտակությամբ ու չարությամբ: Երբ մարդը լսում ու հավատում է Աստծո խոսքին, նրա մարմինը նմանվում է ճրագի, որը իրենից լույս է ճառագում, այսինքն կարևորը մարդու հավատն է ու ներքին լույսը, ոչ թե խափուսիկ արտաքինը:

Առակը սովորեցնում է. կարևորը մարդու ներաշխարհն է, ոչ թե արտաքինը:

ԵՐԿՈՒ ՈՐԴԻՆԵՐԻ ԱՌԱԿԸ

Մի մարդ է լինում, ունենում է երկու որդի: Մի օր նա նրանց ասում է, որ մշակեն այգին: Մեկը ասում է, որ կկատարի գործը, բայց չի պահում խոստումը, իսկ մյուսը մերժում է, բայց հետո զղջում է ու մշակում այգին: Երկրորդ որդին զղջաց ու կատարեց հոր կամքը: Այս առակը նույնպես խորիմաստ է:

Առակի իմաստն է. մարդիկ պետք է լինեն իրենց խոսքի ու գործի կրողները, կարողանան սխալվելու դեպքում ապաշխարհեն ու կատարեն Աստծո խոսքը:

ԼԱՎ ԸՆԿԵՐՆԵՐ

Օրերից մի օր, երկու ճանապարհորդ ընկերներ հասնում են մի տարօրինակ քաղաքի, ինչու՞մն էր այդ տարօրինակությունը. քաղաքի դարպասների վրա կախված էին մարդկանց գլուխներ: Երբ նրանք մտան դարպասներից ներս, այդտեղ կանգնած դռնապահներից հարցուփորձ արեցին ու ստացան նույնպիսի տարօրինակ պատասխան, որ դրանք իրենց պես օտար ճանապարհորդների գլուխներ են: Ճանապարհորդ ընկերներին թագավորի ծառաները այդ պահին տանում են ներս: Թագավորը նրանց պատվում և ճոխ հյուրասիրություն է կազմակերպում: Այդ ընթացքում ընկերներից մեկը մի առիթով դուրս է գալիս հյուրասենյակից: Այդ պահից օգտվելով՝ թագավորը փորձության է ենթարկում մյուս ընկերոջը խորամանկ հարցով. << Այսպիսի պատվավավոր մարդը ինչու՞ է նման հասարակ մարդու հետ ճանապարհորդում, միթե՞ դա ամոթ չէ>>: Ի զարմանս թագավորի, այդ ընկերը տալիս է խորիմաստ պատասխան, որ թագավորը սխալվում է և իր ընկերը այդպիսին չէ, այլ իսկական ընկեր, և դա իր համար մեծ պատիվ է: Նմանատիպ իրավիճակում հայտնվում է նաև մյուս ընկերը: Այս անգամ ենթարկվելով մեկ այլ փորձության. << Թե բա լինելով հարուստ տոհմի զավակ՝ինչու՞ է այսպիսի անարժան մարդու հետ շրջում և արատավորում իր պատիվը>>: Այս անգամ էլ թագավորը ստանում է արժանի պատասխան, որ թեպետ նա հարուստ տոհմից չէ, բայց շատ ազնիվ է և բազում անգամներ փրկել է իրեն նեղություններից, ինչի համար ինքը շատ հպարտ է: Այս փորձություններից հետո թագավորը երկու օտարական հավատարիմ ընկերներին թանկարժեք նվերներով ճանապարհ է դնում: Պալատականները շատ զարմացած էին, թե ինչու նրանք չարժանացան նախորդների ճակատագրին: Թագավորը բացատրում է, որ նրանք վեր չդասեցին իրենց արժանիքները մյուսին ստորացնելով, այլ հպարտանում և գովաբանում էին միմյանց արժանիքները:

Առակս ի՞նչ կցուցանե. երբեք ոչ մի փորձության ժամանակ պետք չէ վախենալ ու լինել ոչ սկզբունքային, և դրա դիմաց կարժանանաս մեծ գնահատանքի ու պարգևների.

- Ճամփիդ ընկերն է խելացի - զույգ վագրից էլ մի վախեցի:
- Ընկերները գժտվեցին – չար թշնամուն զենք տվեցին:

- Թե չես փնտրել, որտե՞ղ գտնես, թե չես ցանել, ինչպե՞ս հնձես:
- Ուրախություն լինի, թե վիշտ – լավ ընկերը կողքիդ է միշտ:
- Լավին լավով հատուցեցիր՝ բարի համբավ վաստակեցիր:
- Չարին բարով հատուցեցիր՝ իմաստունին նմանվեցիր:
- Լայն սրտի տեր մարդու համար, երկինքն էլ է կապում կամար...
- Դիպուկ խոսքը ասած տեղին, հազար ոսկի արժե դեղին:

ՍԵՐՄՆԱՑԱՆԻ ԱՌԱԿԸ

Օրերից մի օր, մի սերմնացանը որոշում է ցանել իր արտը, որի ժամանակ սերմի մի մասը ընկնում է ճանապարհի եզրին: Դրա պատճառով սերմերը մնում են բաց և թռչունները դրանք ուտում են: Սերմերի մի մասը ընկնում է քարաժայռ ու քարքարոտ (այլ կերպ ասած՝ ապառաժ) հողում: Այս անգամ արմատները խորը չէին, շուտ ծլում էին, կանաչում, բայց արևի ծագելուն պես, ծիլերը խանձվում էին ու արագ չորանում: Սերմերի մի մասը ընկնում է փշոտ տեղ, նորից ծլում ու մեծանում են, բայց լինում են անպտուղ. ինչու՞, որովհետև փշերը բարձրանալով՝ խեղդում են ծիլերը: Սերմի մյուս մասը ընկնում է բերրի, արգավանդ, հարուստ (այլ կերպ՝ պարարտ) հողի մեջ: Այստեղ նրանք աճում են ու ցորենով լի հասկեր դառնում, բերք են տալիս բազում անգամ՝ երեսուն, վաթսուն, հարյուր…

Երբ Հիսուս Քրիստոսը ավարտում է, շատերը չեն հասկանում առակի իմաստը և խնդրում են, որ Հիսուսը բացատրի: Նա ասում է, որ այս առակում սերմնացանը Ինքն է. եթե սերմնացանը ցորեն է ցանում, ապա Հիսուսը Աստծո խոսքն է տարածում: Այստեղ սերմերը իր քարոզներն են, իսկ հողը՝ ճանապարհը, ապառաժ քարերը, փշերը՝ տարբեր մարդիկ: Ճանապարհը՝ Աստծո խոսքը լսող, բայց ուշադրություն չդարձնող մարդիկ են, որոնք միայն իրենց հաճույքների մասին են մտածում ու ամեն ինչ անում են իրենց շահի համար, այդ պատճառով մոլորվում են չարի կողմից ու մոռանում են Աստծո խոսքը: Քարքարոտ հողը Աստծո խոսքը լսող մարդիկ են, ընդունում են ուրախությամբ, ցանկանում են բարիք գործել, բայց նեղության ու դժվարության պահին շեղվում են իրենց

ճիշտ ճանապարհից, որովհետև իրենց հավատը չունի ամուր հիմքեր: Փշոտ մոլախոտերով հողը այն մարդիկ են, ովքեր լսում են Աստծո խոսքը ու ցանկանում են հետևել, կատարել, բայց կյանքի շատ դժվարություններ, հարստության հանդեպ ունեցած իրենց հրապուրանքն ու բազում ցանկությունները գերում ու գրավում են նրանց: Նրանք չեն հրաժարվում իրենց հին ու վատ սովորություններից, որոնք կարծես մի փուշ խեղդում են իրենց մեջ. Աստծո խոսքը և բարիք գործելու ցանկությունը: Վերջին պարարտ հողը նման է այն մարդկանց, ովքեր լսում, հասկանում, պահպանում ու տարածում են Աստծո խոսքը, որոնք տալիս են բարի պտուղներ՝ ցորենի սերմնացանի հատիկի պես:

Առակս ի՞նչ կցուցանե. որպեսզի կյանքում քո գործերը լինեն հաջող, իսկ նպատակներդ հաղթահարված ու կատարված, պետք է լինել լսող, հասկացող, պահպանող և Աստվածապաշտ, Աստվածահաճո, շատ արժանավոր լավ մարդ: Դրա դիմաց կստանաս բարի պտուղներ: Դիպուկ են ասված հետևյալ մտքերը.

- Մարդը պետք է հավատարիմ լինի իր խոսքին, գործին և հավատին:
- Չի կարելի լինել փառասեր:
- Կարևոր որոշումներ կայացնելուց առաջ պետք է լավ մտածել ու կշռադատել:
- Մարդը միայն ուտելու համար չէ, որ ապրում է: Կերակուրն ընդամենը միջոց է, որպեսզի մարդը կարողանա ապրել, ստեղծագործել ու բարի գործեր կատարել:
- Քո խոսքը ճրագ է իմ ոտքերի համար և լույս՝ իմ ճանապարհի համար:

ՈՐՈՄՆԵՐԻ ԱՌԱԿԸ

Մենք գիտենք, որ Հիսուս Քրիստոսը Իր առակներում շատ հաճախ Իրեն սերմնացան է անվանում: Օրերից մի օր, մի ագարակատեր (մենք գիտենք, որ ագարակ բառացի նշանակում է <<բանջարանոց, դաշտ կամ արտ>>, հետևաբար դրանց տերը կկոչվի ագարակի տեր կամ ագարակատեր), իր մշակներին (հողի վրա աշխատողներ) պատվիրում է ցորեն ցանել: Դրա համար պետք է հողը մաքրել քարերից, փշերից և այն ամենից, ինչը կխանգարեր ցորենի հասկերին լավ աճել: Բայց կեսգիշերին, երբ բոլոր

մարդիկ քնած էին, չարակամ մարդիկ գաղտագողի այդտեղ որոմ են շաղ տալիս (այն նման է ցորենի, բայց ինքը դառնահամ մոլախոտ է) ու արագ հեռանում: Անցնում է մի որոշ ժամանակ և սերմը սկսում է ծլել, այնուհետև կանաչում է: Այստեղ մշակները զարմանում են, թե որտեղից հայտնվեցին որոմները ու դրա մասին տեղեկացնում են ագարակատիրոջը: Ագարակատերը գլխի է ընկնում, թե այդ բարի սերմերի փոխարեն ինչու հայտնվեցին չար սերմերը: Նրանք հասկացան, որ դա հավանաբար չարակամ մարդկանց ձեռքի գործն է: Ագարակատիրոջ թույլտվությամբ մշակները ցանկանում են մաքրել արտը, բայց երկար մտածելուց հետո, տերը նրանց մերժում է: Նա բացատրում է մշակներին, որ այդ դեպքում կարող է անզգուշաբար վնասվեն ցորենի հասկերը, քանի որ տերը չէր ցանկանում, որ անգամ մեկ հասկ վնասվեր, ու երկուսն էլ միասին աճեցին: Երբ եկավ հնձելու ժամանակը, ցորենը ամբարեցին, իսկ որումը այրեցին: Աշակերտների խնդրանքով Հիսուսը բացատրում է առակի իմաստը.

Առակս ի՞նչ կցուցանե. այստեղ ագարակատերը նման է Իրեն, իսկ ագարակը՝ աշխարհին: Ցորենի սերմերը բարի մարդիկ են, իսկ որոմները՝ չար: Բարին բարի պտուղ է տալիս, իսկ չարը՝ չար: Նրանց առանձնացնում են հավաքելուց հետո, որպեսզի յուրաքանչյուրը իր գործի համար ստանա իրեն արժանվույնը: Իսկ ինչու՞ սկզբում այդպես չարվեց, այլ՝ վերջում: Հիսուսը բացարեց, որ այդպես չարվեց, որպեսզի բարի մարդկանց նեղություն և վիշտ չպատճառվի չարերի մեղքով, սակայն չարերին նույնպես միևնույն ժամանակ հնարավություն է տրվում զղջալու և ուղղվելու, որ հետո որոմի փոխարեն բարի պտուղներ տան: Այստեղ տեղին է հիշել հայոց եկեղեցու 7 խորհուրդները.

- Սուրբ մկրտություն
- Սուրբ դրոշմ
- Ապաշխարհություն
- Սուրբ հաղորդություն
- Պսակ կամ ամուսնություն
- Ձեռնադրություն
- Կարգ հիվանդաց

Վերոնշյալից հետո պարզաբանենք <<Ապաշխարհություն>> խորհրդի իմաստը, մեկնաբանենք ու պատկերենք գծապատկերների տեսքով և կիմանանք թե ինչու է Քրիստոսը բոլորին տալիս զղջալու և ուղղվելու հնարավորություն: Հասուն տարիքում ապաշխարհելը այլ է, փոքր տարիքում՝ բոլորովին այլ: Նա կրկնում է իր մանկության տարիքի խոսքերը, բայց մի տարբերությամբ, այն կատարվում է եկեղեցում՝ քահանայի ներկայությամբ՝ ավելի խորը գիտակցելով իր գործած սխալն ու անթույլատրելի արարքը, որը <<մեղք>> է կոչվում: Հասուն մարդը ափսոսում է, ինչպես ասում են, զղջում է ու թողություն ստանում, այդ ժամանակ նա պետք է մկրտված լինի: Ի տարբերություն դրան, որը մեկ անգամ է լինում, ապաշխարհությունը կյանքի ընթացքում կարող է կրկնվել, բայց դա չի նշանակում, որ պետք է չարաշահել, դա նույնպես ճիշտ չէ: Այժմ ստորև ներկայացնենք ապաշխարհության կարգը.

- Ապաշխարհություն
- Զղջում
- Խոստովանություն
- Քավություն
- Թողություն
- Ներում՝ ողորմություն, պահք, աղոթք, բարեգործություն և այլ բարի գործեր

Այժմ մեկնաբանենք Աստվածաշնչյան ևս մեկ առակ.

ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՑՈՒ ՄԱՍԻՆ ԱՌԱԿԸ

Երուսաղեմ քաղաքից մի մարդ որոշում է գնալ ուրիշ քաղաք, բայց ճանապարհին նրա վրա հանկարծակի հարձակվում են ավազակներ, նրանք ծանր վիրավորում են այդ մարդուն ու կիսամեռ թողնում ճանապարհին և հեռանում: Այդ ճանապարհով պատահական անցնող հոգևորականը նկատում է այդ մարդուն, բայց շրջանցելով, փոխում է իր ուղին: Որոշ ժամանակ հետո, այդ նույն ճանապարհով անցնում է հրեա պաշտոնյան: Նա մոտենում է, տեսնում այդ մարդու ծանր վիճակը, չի օգնում և նորից թողնելով նրան՝ հեռանում: Հետո այդ նույն ճանապարհով անցնում է օտարական

սամարացին (Սամարիան քաղաք էր, որը գտնվում էր Միջերկրական ծովի արևելյան ափին: Մենք գիտենք պատմական բազում ընթացքներ՝ կարճ մեկնաբանենք. Սողոմոն իմաստունի մահից հետո հրեական թագավորություն-պետությունը բաժանվում է երկու մասի՝ իրենց մայրաքաղաքներով.

1. Իսրայել – Սամարիա

2. Հուդա – Երուսաղեմ, այս մանրամասները ամբողջացրեցին բառի բացատրությունը):

Օտարականը տեսնում է վիրավորին, խղճում նրան, կապում նրա վերքերը ու տանում հյուրանոց: Սամարացին մի ամբողջ օր խնամում է նրան, հաջորդ օրը մեկնում է հյուրանոցից, բայց հյուրանոցի տիրոջը գումար է տալիս վիրավորի խնամքի համար և ասում, որ եթե ծախսերը ավելի շատ լինեն, խնդրում է շարունակի խնամել իր վիրավոր ընկերոջը՝ խոստանալով վերադարձին վճարել գումարի մնացած մասը:

Առակս ի՞նչ կցուցանե. այս պատմությունը մեզ սովորեցնում է լինել բարի և ուշադիր բոլորի հանդեպ, օգնել նեղության մեջ գտնվողներին, սիրել և հարգել մարդկանց, իմանալ ով է ճշմարիտ բարեկամը, ընկերը, որոնց պետք է իր անձի պես սիրել՝ սիրել և՛ խոսքով, և՛ գործով:

Նշենք մի քանի <<Խրատանիներ>>.

1. <<Հավատարիմ բարեկամ-ընկեր ունենալը մեծ երջանկություն է>>:

2. <<Մի ունեցիր հարյուր դահեկան (այստեղ դահեկանը դրամի անվանումն է), այլ ունեցիր հարյուր բարեկամ>>:

3. <<Պիտի սիրես քո ընկերոջը ինչպես քո անձը (սիրո երկու պատվիրանները)>>, <<Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով ու քո ամբողջ մտքով>>, <<Աստված սեր է…(Աստվածաշունչ)>>:

4. <<Իսկական ընկերը սիրում է ամեն ժամանակ. նա եղբայր է՝ նեղ օրվա համար ծնված (Աստվածաշունչ, Առակներ 17:17)>>:

5. <<Նվիրվածի հետ դու նվիրվածությամբ ես վարվում (Աստվածաշունչ, Սաղմոս 18:25)>>:

Մենք գիտենք, որ մարդը ունի արժեքներ, արժեհամակարգ, հիմնարար արժեքներ:

Գիտենք նրա էության մասին, որ կան մնայուն և բացարձակ արժեքներ, կան արժեքների բախում ու դրանց լուծման հիմնախնդիրներ և այդ ամենի շուրջ կազմված են տարատեսակ որոշումներ, որտեղ բաղկացուցիչ մասերից մեկն ընկերությունն ու ընկերասիրությունն է: Այս նկարագիրը պատկերենք գծապատկերի տեսքով.



Ըստ կարևորության վերոնշյալ արժեքները տարբեր իրավիճակներում դասակարգվում են ու մեկնաբանվում այլ կերպ, տարբեր է լինում նաև մարդկանց մոտ՝ տարբեր մոտեցումներով: Ներկայացնենք բացարձակ արժեքները առանձին գծապատկերի տեսքով.



Երբեմն մարդկանց կյանքում լինում են իրավիճակներ, երբ որոշ հանգամանքներ մեզ ստիպում են ընտրություն կատարել վերոնշյալ մնայուն արժեքներից (որը պետք չէ ընտրել), այդ պահին առաջանում են արժեքների բախում (կոնֆլիկտ, որի մասին գիտենք ամեն ինչ). այդ պահին պետք է ճիշտ վարվել: Կարճ մեկնաբանենք թե ինչ է <<կոնֆլիկտը>>. այն լատիներենից թարգմանաբար նշանակում է <<ուժով հարվածել>>- “conflictus” , այսինքն՝ պայքար, կռիվ, անհամաձայնություն, վեճ, հակամարտություն, պատերազմ՝ երկու և ավելի մարդկանց, երկու և ավելի խմբերի միջև, յուրաքանչյուր մարդու կամ մարդկանց ինքնատիպության, կարիքների ցանկությունների, նպատակների շուրջ առաջացած բախումը: Այն կվերանա, երբ հասկանանք այդ ամենի հիմքը և պատճառը: Եվ այսպես.

- Կոնֆլիկտ - բացասական վերաբերմունք և դրական վերաբերմունք
- Բացասական վերաբերմունք - բացասական կոնֆլիկտային խմբեր՝ կոնֆլիկտներում պետք է հաղթել՝ խուսափելով կոնֆլիկտներից և ճնշելով դրանք: Կոնֆլիկտը համարում են գլխացավանք, ոչ մի արժեք չեն տեսնում կոնֆլիկտի մեջ, հավատում են, որ կոնֆլիկտը միայն բացասական է:
- Դրական վերաբերմունք – դրական կոնֆլիկտային խմբեր՝ կոնֆլիկտը համարում են խնդիրներ լուծելու միջոց: Կոնֆլիկտները խրախուսվում են, համարում են, որ կոնֆլիկտները շատ կառուցողական դեր ունեն, կոնֆլիկտների մեջ շատ արժեքներ են տեսնում, կոնֆլիկտները պետք է լուծել:

Կոնֆլիկտները լինում են նաև.

- Քայքայիչ – ցավ, չարություն, թշնամանք, բռնություն, վիշտ – բացասական ազդեցություն
- Կառուցողական – նոր նախաձեռնություն, նոր նպատակ, ձգտում, սեփական արժեքների հստակեցում, ինքնաճանաչողություն, ճանաչողություն, խթան – դրական արդյունք՝ առանցքային խնդիրներ

Կան կոնֆլիկտային իրավիճակների հինգ հիմնական մոտեցումներ – կենդանակերպով արտահայտված ռազմավարություններ՝

- Բու՝ խնդիր լուծող
- Արջ՝ մեղմացնող
- Կրիա՝ նահանջող
- Աղվես՝ փոխզիջման գնացող
- Շնաձուկ՝ հաղթանակ-պարտություն պարտադրող

Այսպիսով, վերոնշյալ մեկնաբանությունները (գծապատկերները նույնպես կապված են մեր կողմից ուսումնասիրվող նյութի հետ) ցույց են տալիս ու միևնույն ժամանակ ապահովում միջառարկայական կապը պատմություն-հասարակագիտություն առարկաների հետ:

Այժմ ներկայացնենք Աստվածաշնչյան ևս մեկ առակ և մեկնաբանենք.

ԱՐԴԱՐ ՀԱՏՈՒՑՈՒՄ
ՄԱՐԴԸ, ՈՐ ՆԵՐԵԼ ՉԷՐ ՈՒԶՈՒՄ
(ԸՍՏ ՄԱՏԹԵՎՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ)

Մի թագավոր կար, որ ցանկանում էր իր ծառաներից հաշվետվություն պահանջել: Այդ ժամանակ նրա մոտ բերում են մի պարտապանի (պարտք ունեցող), ով թագավորին պարտք էր հազար դահեկան, որը չէր կարող վճարել: Թագավորը բարկանում է ու

հրամայում, որ նրան՝ իր կնոջ և զավակների հետ, վաճառեն ստրկության, վաճառեն իր ողջ ունեծվածքը և պարտքը վճարեն: Պալատականը աղաչում է գթասիրտ ու ներողամիտ թագավորին իրեն ժամանակ տալ՝ գթալ, զիջել ու ինքը նրա պարտքը կվճարի. այդպես էլ եղավ: Այդ նույն պալատականին պարտք էր իր ծառան՝ նույնպես հարյուր դահեկան: Նույն իրավիճակը կրկնվեց նրանց միջև, բայց այս անգամ պալատականը հաշվի չի առնում իր ծառայի աղաչանքն ու խնդրանքը և հրամայում է նրան բանտ նետել: Մյուս ծառաները, այս ամենը տեսնելով, շատ են տխրում և իրենց տեսածը պատմում են թագավորին: Այնուհետև թագավորը իր մոտ է կանչում պալատականին ու բարկանում նրա վրա, որ նա շատ չար է. չներեց ու չզիջեց իր ծառային այնպես-ինչպես իրեն հետ վարվեցին: Այդ <<չար>> արարքի համար թագավորը հրամայում է պալատականին հանձնել բանտապետին, որ բանտարկեն նրան, մինչև որ վճարի իր բոլոր պարտքերը:

Առակս ի՞նչ կցուցանե. այստեղ շատ տեղին է այն մեկնաբանել Աստվածաշնչյան <<Ոսկե կանոնով>>…<<Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դուք արեք նրանց>>: Պետք է մեր սրտերում միշտ պահպանենք <<Սուրբ հոգու 7 նվերները>>.

1. Իմաստնություն
2. Հանճար
3. Խորհուրդ
4. Զորություն
5. Գիտություն
6. Երկյուղ
7. Աստվածապաշտություն

<<Աստված օր է, կյանք է ու արև,
Եվ մի վարկյան է, ակնդետ մի շող,
Եվ այն որ դու կաս, և ինչ կտեսնես,
Եվ ինչ կսիրես, կասես՝ Փառք Աստծո:

(Աստվածաշունչ)

Այժմ մեկնաբանենք Հիսուսի առակներից ևս մեկը.

ԱՅՐԻ ԿՆՈՋ ՈՒ ԴԱՏԱՎՈՐԻ ԱՌԱԿԸ

Մի քաղաքում մի դատավոր էր ապրում. նա ոչ մարդկանցից էր ամաչում, ոչ Աստծուց՝ վախենում: Այդ նույն քաղաքում ապրում էր նաև մի այրի կին: Նա մի օր դիմում է այդ դատավորին ու խնդրում, որ նա պաշտպանի իր իրավունքները, ինչպես նաև պաշտպանի իր հակառակորդներից: Այդ անիրավ դատավորը միշտ մերժում է, սակայն մի օր նա որոշում է կատարել այրի կնոջ խնդրանքը, ոչ թե նրա համար, այլ իր իսկ անձի հանգստության համար, որ այդ կինը այլևս իրեն նեղություն չտա: Միթե՞ հետո երկրի վրա Մարդու Որդին հավատ կգտնի.Աստված ինչքա՞ն կհամբերի իր ընտրյալների կրած անիրավությունների համար, կպաշտպանի՞ նրանց, ովքեր գիշեր ու ցերեկ դիմում են իրեն՝ իրենց աղոթքներում:

Առակս ի՞նչ կցուցանե. պետք է միշտ աղոթել առանց վհատվելու:

Այժմ մի առակ նույնպես մեկնաբանենք.

ԱՆԻՐԱՎ ՏՆՏԵՍԻ ԱՌԱԿԸ

Մի մեծահարուստ մարդ է լինում, ով ունենում է մի տնտես: Նրա մասին ամբաստանություն են տարածում, իբրև թե վատնում է իր տիրոջ ունեցվածքը: Մեծահարուստ տերը կանչում է նրան ու պահանջում տնտեսի տնտեսության հաշիվը, հողը և պաշտոնը: Այդժամ տնտեսը գիտեր, որ ինքը չի մուրա մեծահարուստ տիրոջը և մտածում է թե ինչպես վարվի: Նա կանչում է պարտապաններից յուրաքանչյուրին ու ասում, թե ինչպես վարվեն. Մեկի մուրհակը - <<հարյուր տակառիկ ձեթը>> պակասեցնում է մինչև հիսունի, մյուսինը - <<հինգ հարյուր պարկ ցորենը>>՝ չորս հարյուրի: Սա տեսնելով՝տերը գովում է անիրավ տնտեսին իր հնարամտության համար, քանի որ այս աշխարհի որդիներն ավելի հնարամիտ են, քան լույսի որդիները իրենց սերնդի մեջ: Լավ է, երբ անիրավ մամոնայից ձեզ համար բարեկամներ ունենաք, որպեսզի, երբ այն պակասի, հավիտենական հարկերի տակ ընդունեն ձեզ: Հիսուսը այս առակում Իրեն համարում է տանուտերը, տնտեսը մարդն է, աշխարհի բոլոր բարիքները

Աստծո ունեծվածքն է, մարդը միայն մատակարարող պաշտոնյան է, նա պետք է Աստվածային այդ բարությունները օգտագործի և հանդերձյալ աշխարհի համար արդյունք ու շահ պատրաստի, որովհետև դրանք ժամանակավոր են: Երբ մարդը մեռնի, իր ապագա կյանքում այս աշխարհի մատակարարությունից օգուտ թող քաղի տարբեր ձևով, օրինակ՝ մուրհակները պակասեցնելով օգտվի տարբերության գումարից՝ շահելով այդ պաշտպանների երախտապարտությունը, որպեսզի երբ պաշտոնից ազատվի, նրանց տներում բնակվի ու կերակրվի: Այդպես լավություն անելով՝ նա նոր ընկերներ ձեռք բերեց, որից մի օր անկասկած կօգտվի:

Առակս ի՞նչ կցուցանե. հասկացնել և ուսուցանել, որ մարդ պարտավոր է ձեռքում եղած աշխարհի բարիքներից ընկերոջը օգուտ հանել, օգնել, նպաստել և ողերմել:

ՎԵՐՋԱԲԱՆ

Այսպիսով, հիմնավորենք մեր առջև դրված հիմնախնդիրը: Մենք մեկնաբանեցինք թե ինչ է առակը, ովքեր են առակագիրները, ինչ է առակագրությունը, որն է նրա անցած ուղին, նպատակը, խնդիրները, կառուցվածքը, տեսակները, պատմական ուղին և դերը բազմակողմանի խորությամբ ու լայնությամբ, նրա նշանակությունը ու անցած ճանապարհը, որը կարմիր թելի նման ձգվում է մինչ օրս: Այն ոչ միայն պահպանվել է, այլ չի կորցրել իր արդիականությունը, առօրյա է, այժմեական: Դա ևս մեկ անգամ ապացուցում է, թե այն ինչ խոր արմատներով է կապված մեր մայր հողի հետ: Այն մերն է՝ հոգեհարազատ, խորիմաստ, կառուցվածքով քրիստոնյա՝ գրված Աստծո շնչով: Աստվածաշնչյան առակներով ամբողջացած, միաժամանակ պարզ, բայց նաև այնպես ամուր ու մնայուն, ինչպես մեր հավատն է ու մեր մայր հողը, մայրենին՝ Մաշտոցյան ու մեր դարավոր մշակույթը՝ իր կուռ ու պատմական աղբյուրներով ու ազգային սովորույթներով ու հոգեկերտվածքով, որը մեզ տալիս է ուժ վստահորեն ասելու. <<Մենք եղել ենք, կանք ու կլինենք...>>: Սա պայմանավորված է մեր Եդեմական-Դրախտային ծագումնաբանությամբ՝ Հայք, Հայկ, հայ, Հայաստան, հայերեն, հայոց լեզու, հայրենիք, հայկազուններ, հայոց երկիր, հայոց աշխարհ:

<<Գերերջանիկ է այն մարդը, ով կարող է ասել, որ իր հայրենիքում արևը ծագում է բոլորի ու ամեն մեկի համար, այնտեղ երկիրը մշակելու և հոգեպես մշակվելու ազատություն ունեմ Ես>>:

Գարեգին Նժդեհ (1886 - 1955)

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայոց եկեղեցու պատմություն (ՀԵՊ) 5րդ դաս., ՀՀ, ԿԳՆ, Երևան 2014, գլուխ 13, էջ 52-53
2. ՀԵՊ 5րդ դաս. , ՀՀ, ԿԳՆ, Երևան 2014, գլուխ 17, էջ 61
3. Աստվածաշունչ, Սաղմոս 119:105
4. ՀԵՊ 5րդ դաս., ՀՀ, ԿԳՆ, Երևան 2014, գլուխ 19, էջ 66-67
5. ՀԵՊ 5րդ դաս., ՀՀ, ԿԳՆ, Երևան 2014, գլուխ 20, էջ 70
6. ՀԵՊ 6րդ դաս., ՀՀ, ԿԳՆ, Երևան 2014, գլուխ 6, էջ 28-29
7. ՀԵՊ 6րդ դաս., ՀՀ, ԿԳՆ, Երևան 2014, գլուխ 8, էջ 34-35
8. ՀԵՊ 5րդ դաս., ՀՀ, ԿԳՆ, Երևան 2014, գլուխ 7-8, էջ 25-32
9. Աստվածաշունչ
10. Աստվածաշունչ, Առակներ 17:17
11. Աստվածաշունչ, Սաղմոս 18:25
12. Հասարակագիտություն 8րդ դաս., ՀՀ, ԿԳՆ, Երևան 2013, գլուխ 1, դաս 6, էջ 44-47
13. Ըստ Մատթևոսի Ավետարանի, Մայրենի 5րդ դաս., Երևան 2015, էջ 159-160
14. ՀԵՊ 5րդ դաս. , ՀՀ, ԿԳՆ, Երևան 2014, գլուխ 22, էջ 78
15. Աստվածաշունչ, <<Սուրբ հոգու յոթ նվերները>>
16. Մայրենի, 5րդ դաս., Երևան 2015, բաժին <<Առակս ի՞նչ կցուցանե>>, էջ 141-164
17. Եզոպոս (Ք.ա. 6րդ դար), Հուսիկ Խանդամուրյան, Հայպետհրատ, Երևան 1955, էջ 1-48
18. Եզոպոս (Ք.ա. 6րդ դար), Հուսիկ Խանդամուրյան, Հայպետհրատ, Երևան 1955, Մ. Պլանուտ <<Եզոպոսի կյանքը>>, էջ 1-48

19. Մխիթար գոշ, Առակներ, Երևան 1951
20. Марр Н. Я. "Сборники притч Вардана", ч. 1-3, СПБ, 1894-1899
21. Орбели И., "Басни средневековой Армении, Москва 1956
22. Հ. Անասյան, ՀՀ Սովետական Հանրագիտարան, Երևան 1974, հատոր 1ին (Ա-Արգինա), բաժին՝ <<Առակ>>, <<Առակագրություն>>, էջ 523
23. <<Ի՞նչ է, ո՞վ է>> կրտսեր տարիքի դպրոցականների համար, հատոր 1ին (Ա-Դ), բաժին՝ <<Առակ>>, էջ 108
24. <<Իմաստության քարավան>> Միջինասիական ժողովուրդների առածներից և ասացվածքներից, Հայաստան Հրատարակչություն, Երևան 1968, Ուզբեկական – էջ 17, Կիրգիզական – էջ 27, Թուրքմենական – էջ 68-69, 71, Կարակալպական – էջ 79
25. Հոգևոր – մշակութային կյանք, Երևան, <<Հայկական կանչ>> (papaver Armeniacum), Սողոմոն Իմաստուն <<Կյանքի պատվիրաններ>>, <<Հիսուսի առակները>>, <<Առակաց>>, <<Ամեն մարդ ինքն իր աչքին արդար է թվում, բայց Տերն է դատում սրտերը>>
26. Մխիթար Սեբաստացի կրթահամալիր, Վովա Չոբանյան <<Աստվածաշնչյան առակներ>>
27. Պ. Հակոբյան <<Առակների տեսությունը միջնադարյան Հայաստանում>>
28. Էմ. Պիվազյան, Վ. Այգեկցի, <<Հայ մշակույթի նշանավոր գործիչները>>, 5-18րդ դարեր, Երևան, ԵՊՀ Հրատարակչություն
29. Գ. Գրիգորյան <<Հայ ժողովրդական բանահյություն>>, Երևան 1967
30. Գարեգին Նժդեհ (1886-1955), Ցեղի մաարտիկին, Ցեղային աշխարհայեցողություն, <<Ազգայնական միտք>>-1, Կենսագրական ակնարկ, Երևան 1998